ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

2023-2025

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2023

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. Զարգացման միտումները նախորդող միջնաժամկետ հատվածում

ՀՀ Լոռու մարզպետարանի գործունեությունն ուղղված է Լոռու մարզում կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսության և զբաղվածության բարձր մակարդակի ապահովմանը, արտագաղթի նվազեցմանը, ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարմանը:

Լոռու մարզպետարանը պետական կառավարման ծառայություններ է մատուցում մարզի տարածքում բնակվող ավելի քան 211.7 հազար բնակչության: Մարզում համայնքների թիվը կրճատվել է խոշորացման արդյունքում և կազմում է 16:

ՀՀ Լոռու մարզպետարանը ապահովում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Լոռու մարզում, համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Նշված նպատակների իրագործումը ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ Լոռու մարզպետարանը իրականցնում է կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում գործող ենթակա կազմակերպությունների կառավարման, կրթության, մշակույթի, սպորտի, քաղաքաշինության, ճանապարհաշինության և այլ ոլորտներում պետական պատվերի տեղաբաշխման, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում միջոցառումների համակարգման ծառայություններ:

Նախորդ միջնաժամկետ ժամանակահատվածում Լոռու մարզում, համավարակով և Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմով պայմանավորված, արձանագրվել են խնդիրներ տնտեսության տարբեր ոլորտներում, որոնք ընդգծված են եղել հիմնականում ծառայություն մատուցող ընկերությունների շրջանում:

Չնայած վերը նշված հանգամանքին, 2019-2021թթ. տարիներին, նկատվել են արդյունաբերության ցուցանիշների դրական փոփոխություն, որը պայմանավորված էր հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության խոշոր ձեռնարկությունների արտադրական ծավալների աճով: (2019թ.-ին, սեփականատիրոջ փոփոխության արդյունքում, սկսվել է Թեղուտի հանքարդյունաբերական գործարանի վերագործարկումը: 2020թ.-ին մարզում ոլորտի արդյունաբերական արտադրանքի ծավալները ընթացիկ գներով կազմել է 109.6 մլրդ դրամ: «Սագամար» ՓԲԸ-ն միջոցներ է ձեռնարկում վերսկսելու ընկերության գործունեությունը): Մշակող արդյունաբերության մեջ թեթեւ արդյունաբերության 9 ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի հիմնական մասն արտահանվում է արտասահմանյան տարբեր երկրներ: Ամենախոշոր ընկերությունը «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն է:

Թեև տնտեսության մեջ 2021թ.-ին մասնավոր ընկերությունների կողմից ներդրումների ծավալն ամբողջական գնահատված չի եղել, սակայն արդյունաբերության մեջ արձանագրվել է 729.9 մլն դրամ և զբոսաշրջության ոլորտում 767.2մլն դրամ ներդրումներ: Նկատվում է մարզի գրավչության բարձրացում, մասնավորի կողմից ձեռք են բերվում շենք-շինություններ և հողատարածքներ հյուրանոցային տնտեսություններ հիմնելու նպատակով:

Հրատապ խնդիրներ են հանդիսանում դեռևս՝

- գործող կազմակերպությունները, որոնք աշխատում են իրենց հզորության 15-30%, ունեն վերազինման կարիք նոր սարքավորումներով և տեխնիկայով, ինչպես նաև շուկաների բացահայտման
- ներդրումների ներգրավում
- նոր աշխատատեղերի ստեղծումը
- գործազրկության և աղքատության բարձր մակարդակը

Լոռու մարզում գյուղատնտեսության մեջ նոր կամ շարունակական ներդրումների ծավալը 2021թ. կազմել է 4.07 մլրդ դրամ: Գյուղատնտեսության բնագավառում նախորդ 2020թ տարվա համեմատ նվազել է 18.6 տոկոսով: Ստեղծվել են՝ 1 խոշոր, 20 փոքր, 8 միջին գյուղատնտեսական տնտեսություններ:

- ✓ Մշակվող վարելահողերի թիվը 2020թ.-ի աշնանացանի նկատմամբ ավելացել է 578 հա-ով:
- ✓ Ոռոգելի հողատարածքների նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 450 հա-ով:
- ✓ Ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիները ավելացել են 14.0 հա-ով:
- ✓ Հակակարկտային ցանցով պատված ինտենսիվ այգիների տարածքը մնացել է նույնը:
- ✓ Սպանդանոցների թիվը ավելացել է 1-ով, որի արդյունքում հզորությունը տարեկան ավելացել է 1000տ-ով:
- ✓ Պետական օժանդակության «Գյուղական համայնքներում փոքր և միջին խելացի անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում կառուցվել է թվով 2 անասնաշենք:
- ✓ Հիմնվել է խոշոր եղջերավոր կենդանիների պահվածքի թվով 1 տոհմային տնտեսություն:
- ✓ Տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների թիվը ավելացել է 310 գլխով:

- ✓ Սառնարանային տնտեսությունների քանակը ավելացել է 1-ով՝ 400 տոննա հզորությամբ
- ✓ Հակակարկտային կայանքների թիվը ավելացել է 13-ով:

Հրատապ խնդիրներ են շարունակում մնալ՝

- Ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառության ոչ բավարար մակարդակը
- Գյուղտեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը
- Հակակարկտակայանների ոչ բավարար քանակը
- Ոռոգման ջրի խնդիրը:

2020-2022 թվականներին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կողմից օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորությունների և գործառույթների իրականացման համար ապարատի պահպանմանն ուղղված ֆինանսական միջոցները կազմել են 2020 թվականին՝ 634271.6 հազար դրամ, 2021 թվականին՝ 619350.5 հազ. դրամ: 2022 թվականի համար նախատեսված է 585871.1 հազ. դրամ:

Մարզպետարանի կարողությունների զարգացման նպատակով 2020 թվականի պետական բյուջեից հատկացված 3500.0 հազար դրամ գումար, որը ուղղվել է 10-15 տարի շահագործման ժամկետ ունեցող համակարգչային տեխնիկայի թարմացմանը և գրասենյակային գույքի ձեռքբերմանը: 2021թ. բյուջեով նշված ուղղությամբ ծախսեր չեն նախատեսված, 2022 թվականին նախատեսված է 1500.0 հազ. դրամ:

ՄԺԾԾ ժամանակահատվածում մարզպետարանի կողմից իրեն վերապահված առաքելության իրականցման շրջանակում ապարատի պահպանման գործընթացի և հետևաբար աշխատակազմի կողմից օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորությունների և գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման տեսանկյունից հիմնական նպատակները և հիմնական թիրախները մեր կողմից դիտարկվում է համակարգչային տեխնիկայի ֆիզիկապես և բարոյապես մաշվածությունը, որը անմիջականորեն ռիսկեր է առաջացնում տեղեկատվության մշակման, վերլուծության ինչպես որակի, այնպես էլ ժամկետայնության առումով: ՀՀ Լոռու մարզպետարանում անհրաժեշտություն է առաջացել նաև բարոյապես և ֆիզիկապես մաշված գրասենյակային կահույքի/աթոռներ և գրասեղաններ/ փոխարինումը նոր կահույքով: Մի շարք աշխատասենյակներ, ինչպես նաև մարզպետարանի շենքի տանիքը ունեն վերանորոգման կարիք:

2. Նպատակները և հիմնական թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում

ՀՀ Լոռու մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1) ՀՀ Լոռու մարզի տնտեսական դինամիկ աճի ապահովում՝ որը կապահովի մարզի մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի զգալի աճ,

2) ՀՀ Լոռու մարզի համայնքների կարողությունների համաչափ զարգացում,

3) ՀՀ Լոռու մարզի համայնքների կառուցվածքային բարեփոխումներ և խոշորացում:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը			
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը		
ՀՀ Լոռու մարզում պետական քաղաքականության իրականացման ապահովում	1030 ՀՀ Լոռու մարզում տարածքային պետական կառավարում	ՀՀ Լոռու մարզի տարածքում կատարված ներդրումների ծավալը մեկ շնչի հաշվով, հազար դրամ	253.1	2021	265.8	2023	ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագիր, կետ 6.6 <<Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում>>	Նպատակ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ - Խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար; Նպատակ 9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածք - Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ներառական և կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը

		Տարվա ընթացում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվ, մարդ	2978	2021	3097	2023		
		1000 բնակչին ընկնող նոր ստեղծվող աշխատատեղերի թիվ, տոկոս	1.4	2021	1.5	2023		

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Լոռու մարզի զարգացման երեք առաջնահերթ գերակայություններն են.

1) Արտահանմանը միտված արդյունաբերության զարգացումը, մասնավորապես հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և ՏՏ ոլորտի.

2) Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում

3) Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային տուրիզմի, էկոտուրիզմի զարգացումը:

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1 Պարտադիր և հայեցողական ծախսերը

ՀՀ Լոռու մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը հանդիսանում են պարտադիր ծախսեր, քանի որ այն ամրագրված է ՀՀ սահմանդրության 160-րդ հոդվածով և այդ ծախսերը կատարվում են ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման համար:

ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառման ծախսերը հանդիսանում են հայեցողական ծախսեր:

Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում.

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1030	11001	ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում	ՀՀ Լոռու մարզի տարածքում ՀՀ կառավարության կողմից տարածքային քաղաքականության իրականացում	Աշխատակազմի կառուցվածք և թվաքանակ	ՀՀ Սահմանադրություն, 160-րդ հոդված
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1030	31001	ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում	ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում		

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ Լոռու մարզպետարանի գլխադասությամբ իրականացվում է 1030 «ՀՀ Լոռու մարզում տարածքային պետական կառավարում» ծրագիրը: Ծրագիրը նպաստում է ՀՀ Լոռու մարզի տարածքում ՀՀ կառավարության կողմից տարածքային քաղաքականության իրականացման, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում 2023 թվականին նախատեսվում է իրականացնել երկու միջոցառում, ինչի համար նախատեսվում է 622667.5 հազ. դրամ, այդ թվում՝

- «ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառմանը / 11001/ - 619667.5 հազար դրամ:
- «ՀՀ Լոռու մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառմանը /31001/ - 3000.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել վարչական սարքավորումներ և գրասենյակային գույք:

Համաձայն հաստատված հաստիքացուցակի մարզպետարանի աշխատակիցների թիվը 112 է, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ՝ 4, բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հայեցողական և քաղաքացիական պաշտոններ՝ 7, քաղաքացիական ծառայողներ՝ 92, տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձնակազմ՝ 9: Ծառայողական ավտոմեքենաների թվաքանակը 4 է, որից 3-ը հերթապահ ավտոմեքենաներ:

Ստորև աղյուսակում ներկայացված է ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների թվաքանակը ըստ ոլորտների.

Ոլորտի անվանումը	**Կազմակերպությունների քանակը**				
	2021	**2022**	**2023**	**2024**	**2025**
Կրթություն/ՊՈԱԿ-ներ/	**149**	**149**	**149**	**149**	**149**
Առողջապահություն, որից	**26**	**24**	**24**	**24**	**24**
ՊՈԱԿ-ներ	**12**	**12**	**12**	**12**	**12**
ՊՓԲԸ-ներ	**14**	**12**	**12**	**12**	**12**
Մշակույթ/ՊՈԱԿ/	**1**	**1**	**1**	**1**	**1**
Արտադպրոցական դաստիարակություն	**0**	**0**	**0**	**0**	**0**
Ընդամենը	**176**	**174**	**174**	**174**	**174**

4.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնություններ առկա չեն:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզպետարանը 2023-2025թթ. ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզպետարանին 2023-2025թթ. ընթացքում տրամադրվող բյուջետային ռեսուրսներն ամբողջությամբ ուղղվելու են մարզի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզպետարանը 2023-2025թթ. արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկեր և դրամաշնորհներ չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2023-2025թթ. ընթացքում ՀՀ Լոռու մարզպետարանի պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերին ուղղվելու է 2023թ.-ին՝ 622667.5 հազար դրամ, 2024թ.-ին՝ 598539.7 հազար դրամ, 2025 թ.-ին՝ 602089.7 հազար դրամ:

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ Լոռու մարզպետարանը իրագործում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը ՀՀ Լոռու մարզի տարածքում /ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդված, ՀՀ Լոռու մարզպետարանի կանոնադրության 1-ին կետ/:

Մարզում կառավարության իրականացված քաղաքականությունը ուղղված է մարզի սոցիալ-տնտեսական համընդհանուր զարգացմանը, արդյունաբերության և գյուղատնտեսության արդիական ճյուղերի զարգացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և ընդլայնմանը, կրթական, մշակութային և առողջապահական տարբեր ծրագրերի իրականացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության թվի կրճատմանը և վերջապես քաղաքացու, անհատի բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 5 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի զարգացման տեսլականն է՝ ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, SS ոլորտ:

ՀՀ Լոռու մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1) Մինչև 2025թ. ՀՀ Լոռու մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով,

2) Մինչև 2025թ. ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում՝ շեշտը դնելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերի վրա,

3) Մինչև 2025թ. ՀՀ Լոռու մարզում կբարելավվի տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի զարգացման երեք առաջնահերթ գերակայություններ են.

1. Արտահանմանը միտված արդյունաբերության զարգացումը, մասնավորապես հանքային արդյունաբերության, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության և SS ոլորտի՝ ավելացնելով արտադրանքի ծավալները և բնապահպանական միջոցառումները:
2. Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում:
3. Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ ձմեռային տուրիզմի էկոտուրիզմի զարգացումը՝ կընդլայնվեն հյուրանոցային տնտեսությունների հնարավորությունները և սպասարկման որակը, կզարգանան ենթակառուցվածքները:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից իրականացվող ընդհանուր ծախսերը հայտերով ներկայացված են՝ բացված ըստ հիմնական ծրագրերի և ուղղությունների: